

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՒԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԱԼԱՎԵՐԴԻ



1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ալավերդին բազմաբնակավայր համայնք է: Ալավերդի համայնքի կազմում ընդգրկված են թվով 29 բնակավայրեր՝ Ալավերդի, Ախթալա, Շամլուղ քաղաքները և Կարմիր Աղեկ, Հագվի, Արդվի, Ամոջ, Արևածագ, Այգեհատ, Ծաթեր, Մղարթ, Օծուն, Նեղոց, Մեծ Այրում, Փոքր Այրում, Ճոճկան, Բենդիկ, Առողջարանին կից, Ախթալա, Ակներ, Սանահին, Աքորի, Կաճաճկուտ, Հաղպատ, Ծաղկաշատ, Զիլիզա, Քարկոփ, Թեղուտ, Շնող գյուղերը:

Համայնքի կենտրոն է հանդիսանում Ալավերդի քաղաքը:

Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվություն համայնքի կազմում ընգրկված բնակավայրերի մասին:

Ախթալա

Կիրակոս Գանձակեցին իր «Հայոց Պատմությունում» հիշատակում է, որ իշխան Իվանե Զաքարյանը մահացավ 1241 թվականին և նրա դին ամփոփվեց Պղնձահանքում, որն Իվանեն նախկինում խլել էր հայերից և դարձրել վրացական (այսինքն ուղղափառ) եկեղեցի: Խոսքը Ախթալայի եկեղեցու մասին է: Ըստ Գանձակեցու՝ նույն եկեղեցում է ամփոփված նաև Իվանե Ա-ի որդի, իշխան Ավագը (մահ. 1250 թ. Բջնիում):

Միջնադարում (X դար) է կառուցվել նաև Պղնձահանքի կամ Ախթալայի բերդը: Քաղաքում պահպանվել են նաև բազմաթիվ այլ պատմամշակութային հուշարձաններ. մասնավորապես Ախթալայի վանք, Սուրբ Երրորդություն (սուրբ Աստվածածին) վանքը (XIII դար), Առաքելոց (Սուրբ Գևորգ) և Այանես եկեղեցիները, Խաչվանք, Նահատակի վանք մատուռները և Սուրբ Հովհաննես մատուռ-խաչքարը:

Ախթալա բնակավայրը 1921 թ. հուլիսի 20-ին «ՀԽՍՀ վարչական վերաբաժանումների» դեկրետով եղել է Լոռու գավառի Ալավերդի գավառամասի կազմում, 1930թ. սեպտեմբերի 9-ից՝ Ալավերդու վարչական շրջանի կազմում, որը կազմավորվել է Ալավերդու և Դսեղի գավառներից, 1969 թվից՝ Թումանյանի շրջանի կազմում: 1939թ. Ախթալան ունեցել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ, որի ավանային սովետին վարչատարածքային կարգով ենթարկվում էին (1971թ.) Ախթալայի առողջարանը, առողջարանին կից ավանը, Վերին Ախթալա գյուղը, Նեղոց գյուղը, Քարկոփ ավանը: 1995 թվից «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով Ախթալա քաղաքատիպ ավանին տրվել է քաղաքի կարգավիճակ Լոռու մարզի կազմում: Այժմ Ախթալայի քաղաքային համայնքի կազմում են Ախթալա քաղաքը, Ախթալայի առողջարանը և դրան կից գյուղը:

Ախթալա քաղաքը Հայաստանի Հանրապետության գունավոր մետալուրգիայի կենտրոններից մեկն է: Հայկական լեռնաշխարհում գունավոր մետաղների ձուլումը հայտնի է եղել մ.թ.ա. III-II հազարամյակում (Մեծամոր), մշակվել են պղնձի, անագի, ոսկու հանքավայրեր (մ.թ.ա. IV-III դդ.): Պղնձի, ոսկու, բազմամետաղային հանքանյութերի մշակումը, երբեմն տևական ընդմիջումներով, շարունակվել է միջին դարերում և առավել բարձր զարգացման հասել XVIII դարի II կեսին, երբ 1763թ. Ախթալայի արծաթ-կապարի և 1770թ. Ալավերդու պղնձի հանքավայրերի բազայի վրա կառուցվեցին Ախթալայի արծաթ-կապարի և Ալավերդու, այնուհետև Շամլուղի պղնձաձուլական գործարանները:

1785. և 1795թթ. հանքն ավերվել է և փակվել: Հետագայում այն վերականգնել են հույն հանքափոր վարպետները, որոնք եկել էին Հերակլ II թագավորի օրոք, դեռևս 1760-ական թվականներին: 1887-1914թթ. հանքավայրը շահագործել են ֆրանսիացի ձեռնարկատերերը:

1905թ. դադարեցվել էր Ախթալայի արծաթ-կապարի հանքավայրի մշակումը պաշարների սպառման պատճառով:

1918-1920թթ. Հայաստանում գործող ձեռնարկությունների զգալի մասն ավերվել էր: Հեղկոմի 1921թ. հունվարի 11-ի դեկրետով երկրի հանքային արտադրությունն ու մետալուրգիական գործարանները ազգայնացվեցին: 1924թ. սկսեցին գործել Ալավերդու, Ղափանի պղնձաձուլական գործարանները, 1927 թվականին՝ Շամլուղի, Ալավերդու և Ղափանի

հանքերը: 1960-1985թթ. ՀՍՍՀ գունավոր մետալուրգիան մեծ առաջընթաց ապրեց: 1967թ. շարք մտավ Ախթալայի հարստացման ֆաբրիկան:

1971-1975թթ. Շամլուղի պղնձի, Ախթալայի արծաթ-կապարի հանքերն ու հարստացուցիչ ֆաբրիկան ընդգրկվեցին Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի կազմի մեջ: Այժմ վերագործարկվել է Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան:

Ամոց

Ամոց գյուղը գտնվում է Լոռու մարզի հյուսիս-արևելյան բարձրադիր սարահարթի վրա՝ Օձուն գյուղից 1 կիլոմետր հյուսիս- արևելք: Գյուղի մասին հիշատակություններ գալիս են դեռևս 13-րդ դարից: Սակայն այստեղ բնակիչները եղել են Միքայել Լոռու-Մելիքյանի ժառանգները: Նրանք լինելով Վրաստանի մեծահարուստ կալվածատեր, Ամոց գյուղում կառուցել են ամառանոցներ: հետագայում տեղափոխվել են մշտական բնակության: Գյուղի հին կամ այլ անվանումների շարքում հիշատակվում է Ամվոճ, Ամաջա, Ամորջի: Վարչական տարածքը կազմում է 97հա: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունը և հողագործությունն է, կան սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողներ:

Այգեհատ

Գյուղը հիմնադրվել է 1719 թվականին՝ Շահվերդյաններ տոհմի կողմից, որի տարածքում եղել է հին հեթանոսական բնակատեղի իր հին աղբյուրով, որ կոչվել է Բերդաշեն: Հին բնակատեղիում է գտնվում նաև Սուրբ Կիրակի մատուռը խաչքարով, որը կառուցվել է 4-ից 6-րդ դարերում: Գյուղը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Գյուղում 1979 թվականին կառուցվել է 1941-45թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհվածներին նվիրված հուշարձանային համալիրը, որտեղ դրված է նաև Արցախյան պատերազմում զոհվածներին նվիրված հուշաքար, եղեռնի զոհերին նվիրված հուշաքար, ինչպես նաև հարակից տարածքում է թաղված Սիմոն Զավարյանի (ՀՅԴ հիմնադիրներից) աճյունը:

Գյուղից քիչ հեռու՝ ձորում, գտնվում է <<Քոբայրի>> վանական համալիրը, կարմիր խաչը, հին գերեզմանատեղիները :Մեր պապերը ձորից բարձրացել են այժմյան տարածք, որի համար ճանապարհ են բացել և այն անվանել <<Մուտ>> և որը գտնվում է <<Քարի գլուխ>> կոչվող տարածքում և անցնում է մատուռի կողքով : <<Քարի գլուխ>> կոչվող տարածքը մեր տեսարժան վայրերից մեկն է , որտեղից երևում է մեր ձորը իր ամբողջ հմայքով:Այնտեղից երևում է Դեբետ գետը, Դժվար / Չաթին դաղ/ լեռը, ինչպես նաև Քոբայրի վանքը, որոնք կարծես ավիդ մեջ լինեն: Այժմ շատ զբոսաշրջիկներ են գնում այդ մտով՝ տեսարժան վայրերով , մեր բնությամբ հիանալու:

1831թվականին գյուղն ունեցել է 88, 1886թ. - 337, 1922թ. - 500, 1959թ. - 391, 1970թ. - 366, 1979թ.- 295, իսկ ներկայում գյուղում հաշվառում ունի 288 մարդ: Բնակչության 20 տոկոսը գնում է արտագնա աշխատանքի: Սեռային կազմում գերակշռում են կանայք:

Գյուղատնտեսական հողերը բոլորը օգտագործվում են: Գյուղում զբաղվում են դաշտավարությամբ , մշակում են հացահատիկային , կերային, բանջարանոցային կուլտուրաներ: Զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասունների բուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Մինչև սեփականաշնորհումը և 2000-ական թվականները զբաղվում էին նաև այգեգործությամբ (ծիրան,խնձոր. տանձ, սալոր): Վերջին ժամանակները այգեգործությունը կանգ էր առել , սակայն գյուղում վերջին տարիներին ինտենսիվ այգեգործությունը զարգացնում է գործարար՝ գյուղի թոռ, Աղասի Զավարյանը:

Գյուղն ունի դպրոց, բուժկետ, կապի հանգույց (փոստ):

Գյուղը գազաֆիկացված է , ունի շուրջօրյա ջրամատակարարում, 2019 թվականին սուբվենցիոն ծրագրերով կառուցվել են խաղահրապարակ և ոռոգմամ համակարգ տնամերձերը մշակելու համար:

Գյուղը տվել է շատ անվանի մարդիկ, քաղաքական, պետական, հասարակական գործիչներ, բժիշկներ, զինվորականներ, դասախոսներ, ճարտարապետներ և այլն: Գյուղն ունեցել է իր պարային համույթը ազգային պարերով, որոնք առանձնացել են իրենց բնույթով: Համույթը իր աբողջ ժամանակաշրջանում մասնակցել է փառատոնների, մրցույթների, այլ միջոցառումների և շահել բազմաթիվ մրցանակներ ու շնորհակալագրեր, բարձր պահելով Շահվերդյանների անունն ու պատիվը:

Գյուղում է գտնվում Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի քրոջ տունը, ինչպես նաև աշուղ-երգահան Սայաթ - Նովայի կինը՝ Մարմարը, նույնպես Այգեհատից էր: Այն տունը ուր նրանք ապրել են, կիսավեր, խարխուլ վիճակում է և գտնվում է այլ սեփականատիրոջ ձեռքին:

Գյուղը ունի ֆուտբոլի դաշտ՝ դպրոցին կից, վոլեյբոլի դաշտ, ուր իրեց ազատ ժամանակն են անցկացնում գյուղի պատանիներն ու երիտասարդները:

Արդվի

Արդվին շատ հին և պատմական հարուստ ավանդույթներով բնակավայր է: Արդվին հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Գյուղում են գտնվում հայ առաքելական կառույցներ, ինչպիսիք են 7-րդ դարում հիմնադրված, Սուրբ Հովհաննես վանքը, որտեղ հողարկավորված է Հովհան Օձնեցի Կաթողիկոսի աճյունը, 10-11-րդ դարերում կառուցված Կարմիր վանքը: Գյուղի տարբեր հատվածներում պահպանվել են միջնադարյան և ժամանակակից գերեզմանոցներ, այդ թվում տոհմական: Արդվիում են ծնվել նշանավոր հնագետ՝ Երևանի պետական համալսարանի հիմնադիրներից մեկը՝ Աշխարհաբեկ Քալանթարը, ագրոքիմիկոս Պ. Քալանթարյանը:

Արևածագ

Գյուղը հիմնադրվել է 1846 թվականին՝ գյուղի հիմնադիր Մելքոնի ժառանգների կողմից: Նախկինում ունեցել է Ղաչաղան անվանումը: 1978թ-ին վերանվանվել է Արևածագ: 1923 թ-ին ստեղծվել է առաջին գյուղական խորհուրդը: Գյուղի բնակչությունը միատարր է, բոլորը հայ են: Ներկայիս բնակիչները եկել են Ղարաբաղից՝ Վարանդայի մելիքությունից, Շուշիի մոտերքից, ինչպես նաև Վանից և Շամշադինից: Հետագայում գյուղում բնակություն են հաստատել նաև Նոյեմբերյանի և Ստեփանավանի տարածաշրջանից տեղափոխված մի քանի ընտանիքներ: Գյուղը ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, գրադարան, փոստ, նախակրթարան, մարզադաշտ:

Գյուղի արևմտյան կողմում՝ Արևածորում, Ձորագետի ձախ ափին, բարձր լեռան վրա պահպանվում են հին քարաշեն աշտարակի հիմքեր, որն ունեցել է պաշտպանական ամրոցի նշանակություն: Բացի այդ գյուղի տարածքում հնագիտական պեղումներով հայտնաբերվել և ուսումնասիրվել են դամբարանադաշտ, որի հնությունները բնորոշ են մ.թ.ա 11-10-րդ և 8 – 6 –րդ դարերին: Գյուղի ճանապարհները բարեկարգ են, բնակարանները գազաֆիկացված, ապահովված մշտաօդ խմելու ջրով, փողոցների մեծ մասը ունեն գիշերային լուսավորություն: Շատ բարենպաստ է զբոսաշրջության զարգացման համար:

Թեղուտ

ՀՀ Ալավերդի համայնքի Թեղուտ գյուղը հիմնադրվել է հարևան Շնող գյուղի բնակիչների կողմից 20 դարի սկզբին: Բնակիչների նախնիները մասամբ բնիկ լոռեցի են, մասամբ տեղափոխվել են տարածաշրջան Արցախից, Ջավախքից, Սյունիքից, Սևանի ավազանից XVII-XVIII դարերում: Գյուղի անունը կապված է ներկայիս գյուղի կենտրոնական մասում գտնվող հին Թեղուտ գյուղի հետ:

Թեղուտում կան երկնագույն փիրուզի, պղնձի և մոլիբդենի պաշարներ:

Բնակչության մեծ մասը աշխատում է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրում: Գյուղի շրջակայքում կան միջնադարյան պատմաճարտարապետական կոթողներ՝ «Մանստևի» մենաստանը (13 դ.), Վարդան զորավար կոթողը (13-14 դդ.), 10-17 դդ. եկեղեցիներ, «Բարձել» (10-13 դդ.), «Ձորի գյուղ» (14 դ.) և «Ագեղցի» մատուռները: Թեղուտն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզ, գրադարան, բուժկետ, հանդիսությունների սրահ:

Ծաթեր

Ծաթեր գյուղի տարածքում կա երկու եկեղեցի: <<Սուրբ Աստվածածին>> (12-13դդ.) ուղղանկյուն հատակագծով, կիսաշրջան խորանով, թաղակապ երկթեք ծածկով փոքր կառույց է՝ հյուսիսից բացվող մուտքով: Գտնվում է գյուղի հարավային եզրին: Հյուսիսային կողմում զանգակատունն է, որը խորհրդային տարիներին օգտագործվել է որպես տրանսֆորմատորային կայան: Բազմաթիվ խաչքարեր ագուցված են եկեղեցու և զանգակատան պատերին: Եկեղեցու բլրալանջին միջնադարյան գերեզմանոցն է: 11-12-րդ դդ. <<Ճգնավորի վանքը>> գտնվում է գյուղից 0.75 կմ հյուսիս, ձորալանջի ուղղաձիգ քարափի տակ: Ձորեզրից մոտեցումը նեղ արահետով է: Ուղղանկյուն հատակագծով, կիսաշրջանաձև թաղակաձածկ ոչ մեծ սրահ է: Մուտքը արևմուտքից է, լուսավորվում է արևելքից: Կառուցված է անմշակ քարերով: Պատերին ագուցված են խաչքարեր, մուտքի բարավորի քարը հարդարված է խաչաքանդակներով: 1972թ. կանգնեցվել է հուշարձան՝ երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին: Այն գտնվում է գյուղ մտնող ճանապարհի ձախ կողմում, դպրոցի և մշակույթի տան շենքերի միջև ընկած տարածքում: Եռաստիճան հարթակին տեղադրված բարձր պատվանդանի վրա զինվորի բազալտաշերտ արձանն է: Պատվանդանի կողմերին փորագրված են զոհվածների անունները: 1946թ. երկրորդ աշխարհամարտում զոհվածներին նվիրված հուշաղբյուրը գտնվում է գյուղի կենտրոնում: Այն ճարտարապետական մանրամասներով լրացված երկթեք ավարտով ուղղանկյուն ծավալ է՝ կից ցայտաղբյուրներով:

Ծաղկաշատ

Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաղկաշատ գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա, չորս կողմից շրջափակված է գեղատեղի անտառներով և սարերով:

Ծաղկաշատ գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից 16 կմ հարավ-արևելք Գուգարաց լեռնաշղթայի արևմտյան լանջերին: Ծաղկաշատ գյուղը ունի հին պատմական արմատներ, բայց չկան ստույգ արձանագրված տվյալներ, սակայն մինչև 1927 թվականը պաշտոնապես այն անվանվել է Խաչի Դուռ: Անվանումն առաջացել է գյուղի հարավ-արևմտյան կողմում, ոչ մեծ բլրի վրա հայտնաբերված 9-10-րդ դարերում կառուցված Խաչի Դուռ մատուռի անվանումից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գյուղը վերանվանվել է Ծաղկաշատ անունով, ընդգրկելով նաև հարակից տարածքները՝ Զարդ, Գեղատեղ, Կախմախուտ փոքր բնակավայրերը: Ծաղկաշատ անունն առաջացել է բազմաթիվ և բազմերանգ ծաղիկների բազմազանությունից:

Ծաղկաշատ գյուղը հյուսիսից սահմանակից է Հաղպատ գյուղին, հյուսիս-արևելքից սահմանակից է Նեղոց, Շնող և Թեղուտ գյուղերին, իսկ հարավ-արևելյան մասից՝ Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանին, հարավից սահմանակցում է Մոտկորի տարածաշրջանին, արևմտյան կողմից գյուղը սահմանակից է Ակներ թաղամասին:

Գյուղում կա 9-10-րդ դարերում կառուցված մատուռ, 70-ականներին կառուցված 2-րդ համաշխարհային պատերազմում զոհված մարտիկների հիշատակին նվիրված հուշարձան-կոթող, կան խաչքարեր և կացարանների մնացորդներ, միջնադարյան գերեզմանոցներ և այլն:

Կարմիր Աղեկ

ՀՀ Լոռու մարզի Կարմիր Աղեգի գյուղը մինչև 17-րդ դարի կեսերը եղել է շեն: Գյուղն ավելի հին է, քան ենթադրվում է, որի վկայությունն են գյուղի տարածքում և շրջակայքում գտնվող մի շարք գերեզմանոցներ և հին գյուղատեղեր: Բնակավայրի տարածքը եղել է Օձունի վանքապաշտպան հողեր: Գյուղը 1924թ. հունվարի 1-ից բնակեցվել է Օձուն գյուղի բազայի վրա: 1935թ. Կարմիր Աղեգի գյուղում վերաբնակվել է եղեռնից գաղթած 7 ընտանիք: 1936թ. հունիսի 8-ին ստեղծվել է գյուղատնտեսական Արտել: Գյուղում կան պատմական նշանակության հուշարձաններ՝ Թևակոր բեմ/, 12-րդ դարի եկեղեցու ավերակներ, գերեզմանոցներ ու խաչքարեր: Գյուղը գտնվում է Լոռվա ձորի վերևի տարածքում, իսկ ձորը հայտնի է «Սղնախ» կոչվող տարածքով: Առկա են քարայրեր՝ Սև և Գոմշի 7 հարկանի այր, Աբազի մուտ:

Հագվի

ՀՀ Լոռու մարզի Հագվի գյուղը վերահիմնադրվել է 17-րդ դարում, առաջին վերաբնակիչները եղել են Օձունի, Հաղպատի հողագուրկ մի քանի ընտանիքներ, որոնց միացել է նաև Արցախից եկած մեկ ընտանիք: 1915 թվականի եղեռնից հետո Հագվիում հիմնվել են ևս մի քանի ընտանիքներ՝ Վանից, Մուշից և Ալաշկերտից: Վրաստանը Ռուսաստանին միանալուց և 1861 թվականի ռեֆորմից հետո, պետականացված հողերն օգտագործելու իրավունք է տրվում հագվեցիներին, ինչի հետևանքով գյուղը մեծանում է: Այդ հողերը հիմնականում անտառային բացատներ էին, փոքր հողակտորներ: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Այգեհատ ու Մղարթ գյուղերի կալվածատերերի հողերով փոխհատուցված օձնեցիների հողերից հողաբաժիններ են տրվում նաև Հագվեցիներին Լոռվա սարահարթում:

Գյուղի կենտրոնում կա փոքրիկ եկեղեցի, որ կառուցվել է 12-րդ դարում, հետագայում այն վերականգնվել է, ինչը երևում է պատերի շարից: Գյուղի շրջակայքում բազում գյուղատեղիներ կան, իսկ շինարարական աշխատանքների ժամանակ մեծաքանակ բրուտագործական առարկաներ են հայտնաբերվել տարբեր վայրերից: Վերջուս «Թագի Բողան» վայրում հայտնաբերվել են հսկայական տապանքարեր: Գյուղի կենտրոնում շինարարական աշխատանքների ժամանակ 70-ական թվականներին եկեղեցու հիմքերից մեկուկես մետր ցած հայտնաբերվել են հնագույն դամբարաններ, այսպես կոչված մեծամարդկանց մնացորդներով: Սակայն, հնագիտական պեղումներ չեն իրականացվել:

Հագվի անվանումը ավանդաբար բացատրվում է մի քանի ձևով: Լենկ Թեմուրի արշավանքի, ապա վրաց-թուրքական պարբերական պատերազմների, ինչպես նաև Շահ Աբասի, Օմար խանի և Աղա Մահմադ խանի ասպատակություններից հետո ամայացած գյուղատեղում հայտնված Օձունցիներին անվանեցին հակվածներ, այսինքն հակվել են նոր տեղ, որից էլ իբր առաջացել է Հագվի անվանումը:

Մեկ այլ բացատրությամբ կալվածատերերից փախած և Ռուսական կայսրության նոր օրենքով պետական հողում ազատ ապրելու իրավունք ստացածներին անվանել են հակվածներ, այսինքն ճորտական կախվածությունից ազատվածներ:

Հակվել բառը մեկ այլ բացատրություն էլ ունի: Ըստ գյուղի մեծերի Օձունից այստեղ փայտ տեղափոխողների (նախկինում գյուղի տեղում խիտ անտառ է եղել), կամ ձմեռանոցից մթերք բարձած Օձուն գնացողների ձիու բեռը թեք տեղանքի պատճառով հակվել է, թեքվել, ինչի պատճառով ստիպված կանգնել են մի քանի անգամ ամրացրել բեռը, դրա համար էլ ըստ գյուղի մեծերի տեղանքն անվանել են հակվի տեղ, որը հետագայում դարձել է Հագվի: Դրա օգտին խոսում է այն, որ Հագվու հարևան Աքորի գյուղի տարեցները մինչև վերջերս թեք տեղերին անվանում էին «հակվա տեղ», այսինքն թեք տեղ:

Գյուղում գործում է հիմնական դպրոց, աշակերտների թիվը 32: Գործում է, բուժկետ, Հայփոստի բաժանմունք: Գյուղում ավանդաբար բարձր է եղել կրթական ցենզը և երկար տարիներ Ալավերդի քաղաքի և շրջանի կառավարման համակարգի միջին օղակներում բազմաթիվ հազվեցիներ են աշխատել: Ծնունդով եւ արմատներով Հազվեցի են թատերարվեստի երախտավորներ, ՀՀ ժողովրդական արտիստ Վոլոդյա Գրիգորյանը, վաստակավոր արտիստ Բորիս Պեպանյանը, հայտնի լրագրողներ Հրաչյա Պապինյանը, Վարդան Օնանյանը, գրող հրապարակախոս Արծրուն Պեպանյանը եւ ուրիշներ:

Հաղպատ

Հաղպատ գյուղը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքում՝ Լոռվա մարզի Ալավերդի համայնքում:

Գյուղի անունը եղել է Հաղբատ, հետագայում ընդհանրական է դարձել Հաղպատ ձևը:

Հաղպատը որպես բնակավայր թվագրվում է մոտավորապես մթա 8-7-րդ դարերից:

Հաղպատն աշխարհին հայտնի է իր պատմաճարտարապետական կառույցներով՝ Հաղպատավանքով, որը եզակի կառույց է և գրանցված է ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: Հաղպատավանքը հիմնադրվել է 976 թ. Բագրատունյաց Աշոտ Ողորմածի կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու միջոցներով:

Ճոճկան

Ճոճկան գյուղը՝ նախկինում Զոջկանց գյուղը գոյություն է ունեցել 5-րդ դարից Զոջիկ իշխանի անունով, ըստ Ղազար Փարպեցու:

Մեծ Այրում

Բնակավայրի հիմնադրման և պատմության վերաբերյալ տեղեկություններ չկան, սակայն գյուղի տարբեր հատվածներում գտնվող խաչքարերը, հյուսիս-արևմտյան հատվածում տեղակայված Նահատակ վանական համալիրը վկայում են Մեծ Այրումի վաղեմության մասին: Որոշ ժամանակ գյուղը բնակեցված է եղել բացառապես թաթարական ցեղերով (1939 թվականից հետո կոչվել են ադրբեջանցիներ): 1988թ.-ից սկսած վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայերով:

Մղարթ

Մղարթը Հայաստանի հյուսիսային՝ Լոռու մարզի փոքր ու հին բնակավայրերից է: Այն տեղակայված է Թումանյանի տարածաշրջանում՝ շրջապատված գեղատեսիլ լեռներով, անտառներով և հոսող գետերով:

Անվան ծագում «Մղարթ» անվան ստույգ ստուգաբանությունը դժվար է ճշգրտել, սակայն հնարավոր է, որ այն կապ ունի տեղանքի բնապատկերի կամ որոշ հնագույն բառերի հետ, որոնք ժամանակի ընթացքում ձևափոխվել են:

Նեղոց

Գուգարաց լեռնաշղթայի գագաթով մի նեղ ճամփա է ձգվում, որի շուրջը մարդիկ բնակություն են հաստատել նախնադարից: Նեղ ճանապարհների պատճառով կոչվել է ՆԵՂՈՅ: Ըստ պատմական աղբյուրների և տարածքում հայտնաբերված պատմամշակութային հուշարձանների և խաչքարերի ուսումնասիրությունների՝ հանդիսանում է 10-15-րդ դարերի գյուղ:

Շամլուղ

Հիմնադրվել է 1770 թվականին 1763 թվականին վրաց Հերակլ 2 թագավորի կողմից Լոռի հրավիրված և Ախթալայում բնակություն հաստատած հույն կապարագործ-հանքագործների կողմից: Վերջիններս համոզվելով որ ցածր է Ախթալայի հանքերում պղնձի և արծաթի պարունակությունը գտնում են նոր հանքավայրեր և տեղափոխվելով 1770 թվականին հիմնում են Մադան(ներկայումս Ալավերդու վարչական կազմում) և Շամլուղ գյուղերը:

19-րդ դարի վերջերին տարածաշրջանի պղնձարտադրությունը կապալով հանձնվեց Ֆրանսիացի արդյունահանողներին, որոնք հսկայական միջոցներ ներդրեցին Ալավերդու և Շամլուղի հանքերի վերակառուցման ու ընդլայնման ուղղությամբ: Ձեռքի աշխատանքը փոխարինվեց մեքենաների աշխատանքով: Տեղի ունեցավ եվրոպացիների ներհոսք, ինչը դրական ազդեցություն ունեցավ բնակավայրի սոցալ կրթական ու մշակութային զարգացման գործում: Խորհրդային տարիներին Շամլուղը բանվորական ավան էր, իսկ 1996 թվականի վարչատարածքային փոփոխության արդյունքում դասվեց քաղաքների շարքը:

Ավանդույթը պատմում է, որ Արտաշես I արքան Մեծ Հայքի հյուսիսային նահանգները շրջելիս, (ք.ա. 189-160թթ.) եղել է Շամլուղի պղնձի հանքերում, որտեղ պղնձագործները նրա համար մատանի են ձուլել և նվիրել:

Շնող

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Շնող գյուղի պատմությունը սերտորեն առնչվում է Կայծոռն ամրոցի հետ /10-11դդ./: Կայծոռն-Շնող անվանափոխությունը կատարվել է 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: 1915 թ. Ախթալա կայարանից Շնող են հասցվել Մեծ եղեռնից փրկված 285 գաղթականներ՝ տեղահանված Արևմտյան Հայաստանի Բասենի, Էրզրումի նահանգի գյուղերից: Դրանց չնչին մասն է ապրել Շնողում:

Շնողի բուն տարածքում գտնվում են Կայծոռն ամրոցի (10-րդ) միանավ եկեղեցու (10-րդ դ.) մնացորդները, Սուրբ Գևորգ (1893թ.) և Սուրբ Սարգիս (1894թ.) եկեղեցիները, Տերունական խաչարձան-մատուռը (1222թ.), Սուրբ Սարգիս մատուռը (17-րդ դ.), Ս.Նշան մատուռի մնացորդները (17-րդ դ.): Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին կառուցված է հուշարձան՝ 75-րդ տարելիցի առթիվ, գյուղի կենտրոնական հրապարակի եզրին կառուցված է հուշահամալիր՝ նվիրված Հայրենական պատերազմում զոհված 258 շնողցիների հիշատակին:

Շնող գյուղը այսօր ճանաչված, շեն ու բարեբեր բնակավայրերից է: Ունի միջնակարգ հանրակրթական դպրոց, մանկական արվեստի դպրոց, մշակույթի տուն, գրադարան, մանկապարտեզ, հայրենագիտական թանգարան, բժշկական ամբուլատորիա, փոստային բաժանմունք: Շնողցիների եկամտի հիմնական աղբյուրը հանդիսացել է բազմատարր գյուղատնտեսությունը: Այժմ շնողցու եկամտային աղբյուր է նաև հանքարդյունաբերությունը: Պապենական ճյուղերն են եղել այգեգործությունը, անասնապահությունը, բանջարաբոստանային կուլտուրաների մշակումը, թռչնապահությունը, շերամապահությունը: Շնողցին միշտ էլ առաջնահերթությունը տվել է ուսմանը, կրթությանը: Շնողը հայտնի է եղել ողջ հանրապետությունում իր՝ գիտությանը նվիրված սերնդի ներկայացուցիչներով:

Շնողցիներից դոկտոր-պրոֆեսորներ են 8 հոգի, պրոֆեսոր են 5 հոգի, գիտությունների թեկնածուներ և դոցենտներ են 40 հոգի, վաստակավորի կոչմանն են արժանացել 21 հոգի, գեներալ-մայորի կոչման է արժանացել 1 հոգի, գնդապետի կոչման՝ 2 հոգի, սպորտի վարպետի կոչման է արժանացել 6 հոգի:

Շնողի Սուրբ Սարգիս եկեղեցու բակում է գտնվում նաև 2020 թվականի 44-օրյա պատերզմի զոհերին նվիրված խաչքարը:

Ջիլիգա

Ջիլիգա գյուղը գտնվում է Վրաստանի Հանրապետության սահմանի մոտ, Ալավերդի քաղաքից 33 կմ հեռավորության վրա: Ջիլիգա (ժողովրդական բացատրություն՝ շատ հեռու) գյուղը հիմնադրվել է 1910թ., Հայկի որդի Խոռի կառուցած Խորակերտ կամ Խոռակերտ գյուղաքաղաքի տեղում, որից պահպանվել է համանուն եկեղեցին (XIIդ) և բազմաթիվ այլ հուշարձաններ, գերեզմանոցներ և ավերված բնակատեղիներ: Պահպանվել է նաև Խուճապի վանքը /12-րդ դար/, ինչպես նաև Չախալաբերդ, հնում Բազաբերդ կամ Բազկերդ ամրոցի մի մասը /9-10րդ դդ./: Ըստ առասպելի՝ ամրոցը նույնացվել է Տորք Անգեղի և Հականուշ Գեղեցիկի պատմությանը:

Օձուն

Մատենագրական աղբյուրներում Օձունը հիշատակվում է սկսած 8-րդ դարից:

Ավանդույթի համաձայն՝ 1-ին դարում Թովմաս առաքյալը, գալով Օձուն, եկեղեցու տարածքում օծել է քահանաների ու եպիսկոպոսների: Օձուն անունն էլ, ասում են, որ առաջացել է հենց «օծել» բառից: Տարբեր մատենագիրների մոտ հանդիպում ենք նաև Ազուն, Օձուն, Ազու անվանումները: Իսկ մինչև 1967 թ. գյուղը կոչվել է Ուզունլար, որը թուրքերեն՝ ուզուն-երկար և լար – ճանապարհ բառերից է առաջացել: Գյուղը միջնադարում բավականին հայտնի է եղել շնորհիվ հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցի Իմաստասերի (717-728 թթ):

Օձունի տարածքը հարուստ է պատմաճարտարապետական տարբեր հուշարձաններով՝ եկեղեցիներ, վանական համալիրներ, մատուռներ, կոթողներ, մահարձաններ, խաչքարեր, ժայռափոր անձավներ, հին բնակատեղիներ, ժողովրդական ճարտարապետության նմուշներ: Քարայրներից հայտնաբերվել են բազմաթիվ հիշատակարաններ: Գյուղի կենտրոնական մասում գտնվում են Օձունի գմբեթավոր բազիլիկ եկեղեցին, կոթող-մահարձանը, միջնադարյան երկու գերեզմանոցներ (մեծաթիվ խաչքարերով և մահարձաններով), Ծիրանավոր-Խաղկավանք եկեղեցին և Հոռոմայրի վանքը:

Սանահին

Ըստ ժողովրդական ստուգաբանության՝«Սանահին» նշանակում է սա նրանից /Հաղպատից/հին:Սանահինը աշխարհին հայտնի է իր պատմաճարտարապետական կառույցներով՝ Սանահինի վանական համալիրով, որը եզակի կառույց է և համարվում է ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային պատմական ժառանգության նմուշ: Վանական համալիրը հիմնադրվել 966թ -ն Աշոտ Գ Ողորմած թագավորի և Խոսրովանույշ թագուհու կողմից:

Ակներ

Ակներ գյուղը գտնվում է Դեբեդ գետի բարձրադիր աջ ափին՝ ծովի մակարդակից 1050մ բարձրության վրա: Գյուղի հյուսիսային կողմում են գտնվում միջնադարյան Կայան բերդը և Դսևանք եկեղեցին: Ակները սահմանակից է Սանահին և Հաղպատ բնակավայրերին:

Աքորի

Աքորին գյուղական բնակավայր է Ալավերդի խոշորացված համայնքի կազմում: Գյուղի հիմնադրման մասին ստույգ տեղեկություն չի պահպանվել, սակայն գյուղի տարածքում գտնվող «Ագեղցի» եկեղեցին, որը կառուցվել է 5-6-րդ դարերում, փաստում է, որ գյուղի տարածքը բնակեցված է եղել այդ դարերից:

Քարկոփ

Բնակավայրը հիմնադրվել է 1930-ականներին՝ բնակավայրին կից գտնվող բազալտի և գրանիտի վերամշակմամբ զբաղվող գործարանի շուրջ: Իր լավագույն ժամանակներում գործարանում աշխատում էր 1000-ից ավելի մարդ, այդ թվում նաև հարևան Ճոճկան, Շնող և Արճիս գյուղերից: Սակայն Քարկոփի մասին հիշատակումները գալիս են նաև ավելի վաղ ժամանակներից: Այսպես, դեռևս մեծ բանաստեղծ Նաիրի Զարյանը իր «Ռուշանի Քարափը» ստեղծագործությունում հիացնունք է արտահայտում Քարկոփից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող ժայռերով: Բանաստեղծությունը պատմում է քարափների ստորոտին բնակվող հովիվի՝ Ռուշան պապի մասին:

Քարկոփի՝ հինավուրց բնակավայր լինելու մասին է վկայում նաև Ռուշանի քարափների վերին հատվածում գտնվող հինավուրց պաշտպանական կառույցը: Բնակավայրի տարեցները պատմում են, որ այդ կառույցն օգտագործվել է «ղաչաղների» կողմից թշնամական հարձակումների ժամանակ պաշտպանվելու նպատակով:

Ի դեպ, սկզբնապես խորհրդային իշխանությունը նախատեսում էր խճի գործարանի համար հումք վերցնել հենց Ռուշանի քարափից: Մի որոշ ժամանակ այդպես էլ եղավ: Հումքը քարափի մոտից երկաթգծով տեղափոխում էին խճի գործարան ու այնտեղ վերամշակում ու տալիս վերջնական արտադրանք: Հենց այդ աշխատանքներից մեկի ժամանակ էլ էքսկավատորի ամբարձման ժամանակ հայտնաբերվեց հինավուրց մի խաչքար, որը, ցավոք սրտի, ամբարձիչի հարվածից վնասվեց՝ բաժանվելով երկու մասի: Տեղացիներն այն սեփական ուժերով վերականգնեցին ու տեղադրեցին գտնված վայրից ոչ հեռու՝ դարձնելով այն սրբատեղի:

Կաճաճկուտ

Կաճաճկուտ գյուղի տարածքը ունի հին պատմական արմատներ, ինչի վկայությունն է գյուղում գտնվող 7-8-րդ դարերին թվագրվող Սեդվու «Սուրբ Նշան» եկեղեցին և նույն տարածքի գերեզմանատունը: Կաճաճկուտ գյուղը հիմնադրվել է 1924 թ.-ին:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ալավերդին ՀՀ Միջին մեծության համայնք է, գտնվում է հանրապետության հյուսիսային մասում: Վարչականորեն մտնում է Լոռու մարզի մեջ, մարզկենտրոն Վանաձորիցից հեռավորությունը 44 կմ է, մայրաքաղաք Երևանից՝ 169 կմ, սահմանակից է Վրաստանի հանրապետությանը: Համայնքի միջով է անցնում հանրապետության երկաթուղային հաղորդակցության գլխավոր երակը՝ Թբիլիսի-Երևան երկաթգիծը, հանրապետության արտահանման և ներկրման ավտոտրանսպորտային գլխավոր՝ Թբիլիսի-Ալավերդի-Երևան մայրուղին, ինչպես նաև Հայաստանի ամենաջրառատ անդրսահմանային գետը՝ Դեբեդը:

Ալավերդի համայնքի մակերեսը 295,134 քառ կմ է: Կտրտված ու բարդ ռելիեֆի պատճառով համայնքի թաղամասերն ու բնակավայրերը իրարից բավականին հեռու են: Ռելիեֆին բնորոշ են տարբեր մակարդակի բարձրություններ (500-1700մ), խիստ մեծ թեքություններ (միջին 350մ) :

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համայնքն ունի բարեխառն ու մեղմ կլիմա՝ պայմանավորված մակերևույթի համեմատաբար ոչ մեծ բարձրությամբ: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին $-10.0 + 2,5^{\circ}\text{C}$ է, հուլիսին՝ $+15,3 + 23^{\circ}\text{C}$: Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվում է հուլիս ամսին՝ $+30^{\circ}\text{C}$, $+35^{\circ}\text{C}$, ամենացածրը՝ հունվար, փետրվար ամիսներին՝ $-17-18^{\circ}\text{C}$: Տեղումների քանակը 600-900 մմ է:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	
1.1) ք. Ալավերդի	1) 0 կմ
1.2) Հաղպատ	2) 10կմ
1.3) Ծաղկաշատ	3) 16կմ
1.4) Կաճաճկուտ	4) 15կմ
1.5) Զիլիզա	5) 33կմ
1.6) Ակներ	6) 11,7կմ
1.7) ք. Ախթալա	7) 24,11կմ
1.8) ք. Շամլուղ	8) 30կմ
1.9) Շնող	9) 27կմ
1.10) Քարկոփ	10) 30,41կմ
1.11) Նեղոց	11) 19կմ
1.12) Թեղուտ	12) 30,94կմ
1.13) Ախթալա	13) 24,12կմ
1.14) Առողջարանին կից գյուղ	14) 25կմ
1.15) Բենդիկ	15) 24,15կմ
1.16) Ճոճկան	16) 30,92կմ
1.17) Մեծ Այրում	17) 26,68կմ
1.18) Փոքր Այրում	18) 27կմ
1.19) Օձուն	19) 14,32կմ
1.20) Ամոջ	20) 13,5կմ
1.21) Այգեհատ	21) 18կմ
1.22) Արդվի	22) 20կմ
1.23) Արևածագ	23) 22,8կմ
1.24) Ծաթեր	24) 24,8կմ
1.25) Կարմիր Աղեկ	25) 28,45կմ
1.26) Հազվի	26) 14,46կմ
1.27) Մղարթ	27) 24կմ
1.28) Աքորի	28) 5կմ
1.29) Սանահին	29) 6,8 կմ
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Թումանյան

3.Համայնքի կենտրոնի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	169 կմ
3.2) մարզկենտրոնից (կմ)	44 կմ
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	21 կմ
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	0 կմ
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	1 կմ
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	1 կմ
4.Համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	709 մ
5.Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	295,134/29513
6.Սահմանակից համայնքների անվանումները	Թումանյան
7.Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	alaverdimunicipality@gmail.com
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	alaverdi.am
9.Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	094380094
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	24100
11. Համայնքի հեռախոսային կոդը	0253
12.Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	Այո 26
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	1702
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	30879
2. Գրանցված ծնունդների քանակը	364
2.Մահացության դեպքերի քանակը	315
3.Ամուսնությունների քանակը	108
4. Ամուսնալուծությունների քանակը	42
5. Տնային տնտեսությունների թիվը	13566
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	775
7. Կենսաթոշակառուների քանակը	8262

8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	2329
---	------

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	11
2. Արվեստի դպրոցների քանակը	4
3. Երաժշտական դպրոցների քանակը	2
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	15
5. Հանրակրթական դպրոցների քանակը	32
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	1
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	1
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	1
9. Մարզադպրոցների քանակը	2

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	304357
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	271
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	6728

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	26342,31 հա
2. Բնակավայրերի հողեր (հա)	2968,74 հա
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	1427,26
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	466,82
5. Հատուկ նշանակության	22,91
6. Հատուկ պահպանվող տարածքների	267,54
7. Անտառային	42237,99
8. Ջրային	300,71

9. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	8369
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	4117
11. Խոզերի գլուխաքանակը	4844
12. Գյուղատնտեսական տեխնիկա	228
12.1 տրակտորներ (քանակը)	216
12.2 կոմբայներ (քանակը)	12
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	6319

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	58
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	244,368 կմ
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	Առկա է
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	172
6.2 Էքսկավատորների քանակը	
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	74
6.4 Գրեյդերների քանակը	2
6.5 Աղբատար մեքենաների քանակը	13
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	2
6.8 Վակուումային փոշեկուլ մեքենաների քանակը	
6.9 Ավտոաշտարակների քանակը	5
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	Միջպ. -7,4 կմ Մարզային-9,2կմ
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Այո 4
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	173

որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	81
2. Վարչական ղեկավարների թվաքանակը	23
3. Ավագանու անդամների օրենքով սահմանված թվաքանակը	27
4. Ավագանու անդամների փաստացի թվաքանակը	27

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները
Հիմնանորգված ճանապարհների և մայրերի բացակայություն:	Հողային ծածկույթով (գրունտային) ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում, ճանապարհների և մայրերի հիմնանորոգում:
Ոռոգման ջրագծերի վերանորոգման և նոր ոռոգման ցանցերի ստեղծման անհրաժեշտություն:	Առկա վնասված ոռոգման համակարգերի վերանորոգում, նոր ոռոգման ցանցի կառուցում: Քարաթափման անհրաժեշտություն:
Քարաթափման աշխատանքների իրականացում: Քանդված և վնասված հենապատերի վերանորոգման ու նոր հենապատերի կառուցման անհրաժեշտություն:	Քանդված և վնասված, վթարային հենապատերի հիմնանորոգում, անվտանգության աստիճանի բարձրացում, նոր հենապատերի կառուցում:
Գործազրկության բարձր մակարդակ:	Բիզնեսի համար նպաստավոր պայմանների ստեղծում, Ալավերդի համայնքում բիզնես-ներդրումների խրախուսում:
Հանրային զուգարանների բացակայություն:	Համայնքում հանրային զուգարանների կառուցում: